

ԿՐՕՆ ԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՒ ՏԻՐՈՋ ՓԱՌԲԸ ՓԱՅԼԵՑ ՆՐԱՆՅ ՇՈՒՐՋԸ

Գուկ. 29.

Գարձեալ հնչուում են եկեղեցու զանգակները, հընչուում են ուժգին և աւետում անյոյս ու անյոյս մարդկութեանը, թէ ծնուել է Բարձրեալի Որդին Բեթղեհէմի մտերի մէջ:

Ծնուել է, այն, մինչև անգամ հովիւներն են տեսել Նրան: Տիրոջ փառքը փայլատակել է, լուսաւորել նրանց, նրանք լսել են հրեշտակներին երգելիս «Փառք Աստուծուն բարձունքներում և խաղաղութիւն երկրի վերայ...»

Եւ քրիստոնէական եկեղեցիների զանգակների զօղանջը հնչեցնում է այս ուրախ լուրը տառապած մարդկութեանը:

Այդ քաղցրահնչիւն աւետիսը թափանցում է ամենից առաջ ազատ գիւղացիների խրճիթները, սրանք վաղուց ակնկառոյց սպասում էին, թէ երբ պիտի ծնուի մարդկութեան Փրկիչը: Նրանք այժմ միայն շփում են իրենց աչքերը և տեսնում, որ յիբաւի Տիրոջ փառքի լոյսը իրենց խրճիթն էլ է թափանցել, լուսաւորել իրենց ամենջուած հոգու մի անկիւնը. պարզ է, որ Բարձրեալի որդին է ծնուել, ուրեմն փառք Աստուծուն բարձունքներում, որովհետեւ խաղաղութիւն ու սէր պիտի թաղաւորի երկրի վրայ: Այդ խրճիթների կիսամերկ մանուկներն ամենից առաջ են արձագանգ տալիս զանգակների աւետարեր զօղանջին. հովիւների տուած աւետիքին նրանք ամենից շատ են հաւատում և գնում յայտնում իրենց ծնողներին, թէ Մանուկ Գրիստոսը ծնաւ և յայտնեցաւ: Աւետարեր զանգակների զօղանջը ի վերջոյ թափանցեց նաև հիւանդի խրճիթը. և յուսալից աչքերով նայեց դէպի երգիլը, և ահա այն տեղից էր գալիս նոր աւետիքի բերկ-

բառիթ հնչիւնը, և ահա այն տեղից էր շարում Բեթղեհէմի հովիւներին երկացող լոյսը. զուարթացաւ, ուղղուեց և ապա նայեց իւր վերքերին, տեսաւ, նրանք ապաքինուել էին: Պարզ էր, Բարձրեալի Որդին էր ծնուած: Փառք տուաւ Աստուծուն և ցանկացաւ խաղաղութիւն և սէր երկրի վրայ և մարգկանց մէջ:

Երկացել է աշխարհի վրայ Բարձրեալի Որդին, այդ են հնչեցնում եկեղեցու զանգակները. նրանք աւետում են մի նոր երջանիկ կեանքի սկիզբը, սիրոյ կայծեր են սփռում ատելութեամբ լի այս աշխարհի վրայ: Սյսօր սէրը յաղթանակում է. հաւատարմութիւնը աւելի հաւատարիմ է դառնում, քրիստոնեայ մարդկութիւնը իւր հրեշտակային անմեղ մանկութիւնն է յիշում Աստուածորդու օրօրոցի առաջ, մի կամուրջ է ձգում իւր մանկութեան գեղեցիկ անցեալի և ակնկալած գեղեցկագոյն ապագայի մէջ. ապագայ երջանկաբոյր կեանքի երազանքներով տազորւում: Մենակ մնացած խոտասերտ մարդն անգամ մանուկ է դառնում, որ մանկական լեզուով նարածին Աստուածորդուն աղերսի. Դու Բարձրեալի որդի, նորոգիր մեզ, վերածնիր մեզ. սիրոյ կապով միացրու այս չարատանջ բազմամիլիոն մարդկութիւնը, մխիթարիր և օրհնիր նրանց տունն ու բունը, նրանց արգար աշխատանքը: Սովրեցրու մեզ սիրել և ազօթել, ազօթել և սիրել:

Մ. Խոտսիկեան

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ, ՄԵՁ ԵՒ ՁԵՁ
ՄԵԾ ԱԻՆՏԻՔ.

«Մարհուրդ մեծ, և սքանչելի, ու յայսմ աւուր յայանեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի»:

Համայն աշխարհի և նրա մարգկայնութեան սեռի այսրօւայ 'մեծ և խորհրդաւոր ծնունդ՝ Նազովրեցի մանուկն Յիսուս իւր Բէթլէհէմեան անշուք մատրի մեծախորհուրդ ծննդեամբն զալիս է սքանչացնելու և հիացումն